Հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«29» օգոստոսի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Խոսրովադուխտ Գարեգինի Ազատյանի «Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատվել է

Հայ-Ռուսական համալսարանի «Քաղաքակագիտության» ամբիոնի 2022 թ. օգոստոսի 26-ի նիստում: Նիստին մասնակցում էին քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն.Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Հարությունյանը, ավագ դասախոս Մ.Լ. Հարությունյանը, Ն.Ի.Մարգարյանը, Ի.Ա. Քարամյանը :

Խոսրովադուխտ Գարեգինի Ազատյանի «Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում» ատենախոսության թեման արդիական է, քանի որ վերաբերում է քաղաքական տեսության առանցքային թեմաներից մեկի՝ իրավաքաղաքական բարդ և բազմաչափ երևույթի ուսումնասիրմանը: Փաստ է, որ կառավարման ներկայացուցչական ձևն ամենատարածվածն է արդի աշխարհում:

Թեմայի այժմեականությունը պայմանավորված է փոխակերպվող երկրներում, մասնավորապես ՀՀ-ում պառլամենտարիզմի կայացման նախադրյալների և միտումների վերլուծությամբ:

Այս թեմայի հետազոտության շրջանակներում Խ. Ազատյանը տարաբնույթ աղբյուրների ուսումնասիրման հիման վրա բացահայտել է պառլամենտարիզմի էությունը, դիտարկել է Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների կառավարման համակարգերի արդիականացման հիմնախնդիրները: Հետխորհրդային տարածությունում պառլամենտարիզմի զարգացման միտումները հասկանալու համար հեղինակը հաշվի է առել այն ընդգրկող երկրների առանձնահատկություններն ու դրանցում արձանագրված անցումային իրողությունները: Ըստ այդմ՝ առանձնացրել է պառլամենտարիզմի բնորոշ գծերը տարածաշրջանում: Դիտարկելով ժողովրդավարության զարգացման վրա պառլամենտարիզմի ունեցած նշանակությունը՝ եզրակացրել է, որ իրական ժողովրդավարական սկզբունքների վրա հենված խորհրդարանի ձևավորումն ու գործառնումը բարդ և ժամանակատար գործընթաց է: Ժողովրդավարական կարգի սպառնալիքի պարագայում հենց խորհրդարանն է հարվածի տակ ընկնում: Ուշագրավ է, որ հեղինակը ժամանակակից հայկական պառլամենտարիզմի էվոլյուցիայի վերլուծության հիման վրա վեր է հանել հայկական պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող որոշ գործոններ, ինչպես նաև մատնանշել դրական միտումները:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև այն փոփոխությունների հետ, որոնք տեղի են ունենում ժամանակակից աշխարհում: Երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո պատմական նոր իրականություն ձևավորվեց: Նախկին սոցիալիստական ճամբարի տարածքի քաղաքական էլիտաները սկսեցին մտածել այնպիսի սահմանադրական մոդելի և կառավարման ձևի ընտրության մասին, որը հստակ կամրագրեր պետական իշխանության յուրաքանչյուր մարմնի, այդ թվում խորհրդարանի տեղն ու դերը քաղաքական համակարգում:

Ատենախոսության նպատակն է՝ փոխակերպվող հասարակություններում պառլամենտարիզմի կայացման էությունն ու հիմնական առանձնահատկությունները բացահայտելը, ինչպես նաև զարգացման միտումները վերհանելը:

Այս համատեքստում հեղինակին հաջողվել է բացահայտել պառլամենտարիզմի էությունը վերջինիս ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական տարբեր խումբ սահմանումների և մեկնաբանությունների ուսումնասիրման միջոցով: Հատկապես գնահատելի է այն, որ հեղինակն առաջարկել է ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը նպաստող որոշակի մեխանիզմներ:

Սույն թեկնածուական ատենախոսությունն արդիական և ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որում հեղինակը գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրում է պառլամենտարիզմ հասկացության տարբեր մոտեցումները քաղաքական մտքի ինչպես էվոլյուցիոն, այնպես էլ հեղափոխական զարգացման շրջանակներում: Պատմական մեթոդը թույլ է տվել հեղինակին պառլամենտարիզմը դիտարկել պատմական տարբեր ժամանակահատվածներում: Համեմատական մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռել տալ ներկայացուցչական մարմինների գործառնման գնահատականը, դրանց փոխգործակցությունը քաղաքական այլ ինստիտուտների հետ, ինչպիսիք են կուսակցությունները, նախագահի ինստիտուտը, կառավարությունը: Բացի դրանից՝ բացահայտվել են հետսոցիալիստական երկրներում պառլամենտարիզմի զարգացման օրինաչափությունները, ընդհանրություններն ու տարբերությունները: Ինստիտուցիոնալ մեթոդի կիրառմամբ մեծ ուշադրություն է դարձվել քաղաքական ինստիտուտներին՝ խորհրդարան, գործադիր իշխանության մարմիններ, կուսակցություններ, ընտրական ընթացակարգեր, իշխանությունների տարանջատման մեխանիզմներ, սահմանադրական կարգ և այլն: Այս մոտեցման շրջանակներում պառլամենտարիզմը դիտարկվել է որպես քաղաքական ինստիտուտների և հարաբերությունների առանձնահատուկ համակարգ, որի գործառնումը պայմանավորված է ներքին և արտաքին տարբեր գործոններով: Արտաքին, միջազգային գործոնների տակ հասկացվում են համաշխարհային քաղաքական զարգացման ժամանակակից միտումները, որոնք ազդում են փոխակերպման պայմաններում գտնվող ոչ ժողովրդավարական կամ էլ ձևական

ժողովրդավարական վարչակարգեր ունեցող պետությունների իշխանությունների և կառավարման բնույթի վրա: Ներքին գործոններ ասելով պետք է հասկանալ քաղաքական փոխգործակցության այն առանձնահատուկ նորմերը, մեթոդները, հարաբերությունները, որոնց միջոցով տեղի է ունենում պառլամենտարիզմի՝ որպես քաղաքական և իրավական հարաբերությունների յուրահատուկ տարատեսակի ձևավորումը և որոշվում է տեղը հասարակության քաղաքական համակարգում:

Կառուցվածքային-ֆունկցիոնալ մեթոդը հնարավորություն է տվել բացահայտել քաղաքական համակարգի տարրերի ֆունկցիոնալ կախվածությունը, պետական իշխանության ինստիտուտների կապն ու փոխգործակցությունը:

Դիալեկտիկական մեթոդի օգտագործման շնորհիվ խորհրդարանական համակարգի տարբեր քաղաքական ինստիտուտների և դերակատարների միջև զարգացող հարաբերությունների քննադատական վերլուծություն է իրականացվել՝ բացահայտելով դրանց երբեմն հակասական բնույթը:

Համակարգային մեթոդի կիրառմամբ հետսոցիալիստական երկրներում տեղի ունեցող փոխակերպման գործընթացները դիտարկել են ամբողջության մեջ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել է նաև կոնտենտ-անալիզի մեթոդը, որն աշխատանքին ամբողջական տեսք տալու հնարավորություն է ընձեռել:

Գործնական կիրառելիության տեսանկյունից ուսումնասիրության արդյունքում ստացված եզրակացությունները կարող են օգտակար լինել պետական իշխանության քաղաքական և իրավական հիմքերի զարգացման, ՀՀ քաղաքական համակարգի կատարելագործման համար:

Ատենախոսության թեմայի վերաբերյալ հրապարակումներն ու կատարված եզրահանգումները կարող են նպաստել հայկական պառլամենտարիզմի կայացման գործին: Անցումային երկրներում օրենսդիր ներկայացուցչական իշխանությունը կարող է հակակշիռ լինել ավտորիտար իշխանություններին, ինչպես նաև երաշխավորել սոցիալական տարբեր խմբերի մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործին:

Ատենախոսությունը համակարգված և ամբողջական գիտական ուսումնասիրություն է, որը հեղինակը կատարել է ինքնուրույն և բարձր մակարդակով, դրսևորելով գիտահետազոտական աշխատանքի համար անհրաժեշտ հմտություններ:

Աշխատանքը պարունակում է առաջարկված խնդիրների համապարփակ լուծում:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են պառլամենտարիզմի վերաբերյալ մի շարք մենագրություններ և հոդվածներ, փոխակերպվող հասարակություններում դրա վերլուծության համար անհրաժեշտ գիտավերլուծական նյութեր, պետական պաշտոնական այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթեր:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից /յոթ ենթագլուխներից/, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և օգտակար Հայաստանում քաղաքական գիտության հետագա զարգացման համար: Ուսումնասիրության արդյունքում կատարվել են ոչ միայն հայեցակարգային բնույթի եզրահանգումներ և հետևություններ, այլև մշակվել են մի շարք գործնական առաջարկություններ՝ ուղղված ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը: Ուսումնասիրության արդյունքում ստացած եզրահանգումները, հետևություններն ու ընդհանրացումները ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մեծ արժեք: Ատենախոսության սեղմագիրը և հոդվածները համապատասխանում են ատենախոսության հիմնական օրինակի բովանդակությանը:

Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Խոսրովադուխտ Ազատյանի ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար մեր կողմից առաջարկվող դիտողությունները.

1. Հեղինակը գրում է, որ «հետազոտության օբյեկտն է պառլամենտարիզմի՝ որպես պետական իշխանության կազմակերպման և գործառնման համակարգի ուսումնասիրությունը» (էջ 6): Մեր կարծիքով, «ուսումնասիրություն» բառը այստեղ ավելորդ է, քանի որ հետազոտության

օբյեկտը օբյեկտիվ իրողություն է, որը գոյություն ունի հեղինակի և նրա ուսումնասիրությունից անկախ:

2. «Հետազոտության մեթոդաբանությունը» կետում (էջ 13-14) ցանկալի կլիներ ոչ միայն թվարկել կոնկրետ մեթոդները, որոնք կիրառել է հեղինակը, այլև ներկայացնել հետազոտության տեսական հիմքերը, այսինքն՝ որ տեսություններով է ղեկավարվել հեղինակը այս ուսումնասիրությունը իրականացնելիս:
3. Հեղինակը նշում է, որ «հետազոտության տեսական և գործնական նշանակությունը այն է, որ թեմայի վերաբերյալ հրապարակումներն ու կատարված եզրահանգումները կարող են նպաստել հայկական պառլամենտարիզմի կայացման գործին» (էջ 16): Մեր կարծիքով, ներկայացված փաստարկը վերաբերում է հետազոտության զուտ գործնական նշանակությանը և ուղղակի կապ չունի դրա տեսական նշանակության հետ:
4. Ներածության մեջ հեղինակը օգտագործում է այսպիսի ձևակերպում «ներկայումս երրորդ ալիքի պայմաններում» (էջ 3), սակայն անհասկանալի է նրա մոտեցումը այդ հարցի վերաբերյալ. արդյո՞ք այսօր շարունակվում է ժողովրդավարացման երրորդ ալիքը Ս. Հանթինգթոնի տեսությանը համապատասխան, թե՞ մենք ապրում ենք հետադարձ ալիքի համատեքստում:
5. Հեղինակը ամբողջությամբ չի բացում «փոխակերպվող հասարակություն» հասկացության բովանդակությունը և ծավալը: Եթե այն կիրառել ոչ որպես գիտական տերմին, ապա արդի աշխարհակարգի փոփոխման պայմաններում բոլոր հասարակությունները կարելի է անվանել «փոխակերպվող»: Իսկ եթե այն օգտագործվում է իբրև տերմին, ապա ցանկալի կլիներ հստակ ներկայացնել այս հասկացության հարաբերակցությունը «արդիականացվող հասարակություն» և «անցումային հասարակություն» հասկացությունների հետ:
6. Ցանկալի կլիներ, որ հեղինակը օգտագործեր որոշակի էմպիրիկ նյութ (օրինակ, սոցիոլոգիական հարցումների տվյալներ), ներկայացնելով պառլամենտի նկատմամբ վստահության չափը տարբեր երկրներում, այդ

թվում՝ Հայաստանում: Ինչպես նաև, կապել պառլամենտարիզմի կայացումը ընտրական և կուսակցական համակարգի զարգացման հետ:

7. Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե հեղինակը նաև ներկայացներ պառլամենտարիզմի հայկական ավանդույթի տարրերը Հին Հայաստանում (աշխարհաժողովներ) և տարբեր գործիչների նախագծերում (օրինակ, Շ. Շահամիրյանի մոտ):

Նշված թերությունները չեն նվազեցնում աշխատանքի ամբողջական գիտական արժեքը:

Հայ-Ռուսական համալսարանի «Քաղաքագիտության» ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ **Խոսրովադուխտ Գարեգինի Ազատյանի «Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում»** թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է **ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Եզրակացությունը հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանի «Քաղաքագիտության» ամբիոնի *2022 թ. օգոստոսի 26-ի նիստում:*

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ. Սարգսյան/

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Սարգսյանի
ստորագրությունը հաստատում եմ
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու /Ռ. Կասաբաբովա/